


Braunschweig

Zugangserlaubnis

1909p



18121

328.8 (496)
5-99

ՄՐԱԿԵ

27 SEP 2006
15 JAN 96 հ
5 OCT 2011

Ամերիկա Արևելք

9 (56)
5 - 52

ԹԻՒՐՔԻԱՅԻ

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

Գ.Ա. Է Հ ՊՐՈՒ:
ԲՈՒԱՎՈՎՈՎՈՒՄ 8 կոպ.

300
21-88

1944

ԿՈՆՍԱՌԵԼՈՎՈՒՄ է ՏԵՇ
Բանկը
Կազմակերպություն
Հ. Շահնշահ



Պատմութեան մէջ հազիւ թէ եղած լինի մի այնպիսի խաղաղ յեղափոխութիւն, ինչպիսին է թիւրքականը, և այնպիսի «խոհեմ» յեղափոխականներ, ինչպիսին են երիտասարդ-թուրքերը:

— Ահա թէ ինչպէս պէտք է յեղափոխութիւն անել, — բացականչում են բոլոր երկրների բոլոր չափաւոր տարրերը:

Բայց իհարկէ միայն մետաֆիզիկները կամ տգէտները կարող են այդ «խոհեմութիւնը» վերազրել երիտասարդ-թուրքերի բասայական առանձնայատկութիւններին և ոչ թէ նրանց առանձնայատուկ սօցիալական դրութեան:

Մնաք տեսել ենք ֆրանսիական մեծ յեղափոխութիւնը, որի գլուխն էր կանգնած լուսաւորուած բուրժուազիան, և որը, սակայն, զերծ չը մնաց գիլիոտիններից և արեան ծովերից, մենք տեսանք ոսւսական յեղափոխութիւնը, զեկավարութեամբ նոյն իսկ Արևմտեան Եւրոպայում ճանաչուած հեղինակութիւնների, և դարձեալ նոյն «խելառ» ցնցումներով:

Ինչո՞վ ապա բացատրել, որ թէ ֆրանսիական և թէ ոսւսական յեղափոխութեան գործիչների մէջ չը երևաց այն երեխի «խոհեմութիւնից», որով այնքան մեծ չափերով օժտուած են Ահմետ-Ռիզան և նրա ընկերները:

Ֆրանսիական յեղափոխութիւնը հէնց նրանով է արժանի կլասիքական կոչուելու, որ այնտեղ համեմատաբար աւելի մաքուր ծեռվ երևան եկաւ պայքարը երկու սկըզբունքների մէջ—բուրժուական և ֆեոդալական։ Եւ այդ կրիւը բուրժուազիայի և աւատականութեան մէջ տարւում էր անհաւա կերպով շնորհիւ այն ժամանակուայ ֆրանսիայի պայմանների։

Այժմեան սուսական իրականութիւնը աւելի բարդ է։ Այստեղ բուրժուազիայի և ֆեօդալիզմի կոիւը չի արտայաւում այնքան մաքուր ձևով, ինչպէս ֆրանսիայում 18-րդ դարու վերջին։ Այստեղ խոշոր բուրժուազիան այնքան էլ թշնամիօրէն չէ արտամալրուած ֆեօդալական տարրերի դէմ, բայց նրա փոխարէն հին կարգերի դէմ անհայտ կոիւ են մղում բուրժուազիայից սօցիալապէս ցածր կանգնած դասակարգերը—պրօլետարիատը և գիւղացիութիւնը։ Ներկայ Ռուսաստանը անտեսապէս և սօցիալապէս շատ է առաջ գնացել, որի շնորհիւ և հրապարակ են եկել յեղափոխական այնպիսի ինքնուրոյն դրդիչ ուժեր, որոնք չըկալին ֆրանսիական յեղափոխութեան մէջ, 18-րդ դարի ֆրանսիական պրօլետարիատը իր թուլութեան և քաղաքականապէս չըկաղմակերպուած լինելու պատճառով գնում էր բուրժուազիայի յետնից, մինչդեռ Ռուսաստանի ներկայ պրօլետարիատը այնքան է զարգացած և քաղաքականապէս հասունացած, որ նա մղում է իր ուրոյն դասակարգային քաղաքականութիւնը, որը և այնքան սարսափեցնում է բուրժուազիային և մղում նրան ըեակցիայի գիրկը։ Աւելի լաւ է հաշտուել միապետութեան և առհասարակ աւատականութեան հետ և նրա հետ միասին կիսել իշխանութիւնը, քան թէ քաղաքական ազատութիւն տալ պրօլետարիատին, որից նա պիտի օգտուի տապալելու համար և բուրժուազիայի տիրապետութիւնը—այսպէս է այժմ դատում Ռուսաստանի բուրժուազիան և բուրժուազիայի այդ հակայեղափոխական դիրքն է պատճառը, որ Ռուսաստանի յեղափոխութիւնը վիժեց։

Ահա թէ ինչու այն հանգամանքը, որ /Ռուսաստանում յեղափոխութիւնը վիժեց, իսկ Թիւրքիայում յաջողութեամբ պսակուեց—այդ գեռ չի նշանակում, թէ Ռուսաստանը աւելի յետամնաց երկիր է, քան Թիւրքիան։ Ընդհակառակն թիւրքիայի յեղափոխութեան յաջողութեան դիմաւոր պատճառներից մէկը հէնց այդ երկիր համեմատական յետամնացութիւնն է։

Եւ իսկապէս, Թիւրքիայի բուրժուազիան ոչ մի վախ չունի պրօլետարիատից, որը Թիւրքիայում ներկայացնում է, գոնէ առայժմ, մի արհամարելի ոյժ։ Ինչ վերաբերում է գիւղացիութեան, նա, թէև բազմամիթիոն, բայց գըտնում է այնպիսի աննպաստ պայմանների մէջ, որ անկարող է որ և է ինքնուրոյն գեր կատարելու։

«Մանր գիւղացիները, ասում է Մարքսը, ներկայացնում են մի մեծ մասսա, որի անդամները ապրում են միատեսակ պայմանների մէջ, չը մտնելով սակայն փոխագրձ յարաքերութիւնների մէջ։ Տնտեսութեան ձեզ նրանց առանձնացնում է իրարից և ոչ թէ միացնում փոխադարձ յարաքերութիւնների միջոցով։ Այդ առանձնացմանը նըպաստում են հաղորդակցութեան վատ ճանապարհները և գիւղացիների աղքատութիւնը։ Նրանց մշակած հողի կտորները անհնար են գարձնում աշխատանքի բաժանումը, կամ գիտութիւնից օգտուելը, ապա ուրեմն անհնար են գարձնում և բազմակողմանի զարգացողութիւնը, տաղանդների և հասարակական յարաքերութիւնների զանազանակերպութիւնը։ Ամեն մի առանձին գիւղացիական ընտանիք համարեա ոչ մի կարիք չի զգում մի ուրիշ մէջ։ Այդ ընտանիքը ինքն է անմիջապէս արտադրում իր սպառման իրերի ամենամեծ մասը, ձեռք բերելով այդպիսով ապրուստի միջոցները աւելի շատ բնութեան հետ ունեցած յարաքերութիւններից, քան թէ հասարակութեան հետ ունեցած յարաքերութիւններից։»

Այդպէս էր դատում մի ժամանակ Մարքսը ֆրանսիական գիւղացիութեան վերաբերմամբ։ Բայց այդ բնորոշումը այժմ ամենից շատ սակում է թիւրքական գիւղացիութեանը, որովհետեւ այժմ շատ քիչ երկիրներ կան այնքան զուրկ կապիտալիզմի յեղափոխիչ ազգեցութիւններից, որքան Թիւրքիան։ Ժամանակակից հաղորդակցութեան միջոցներն են—երկաթուղիները, փոստը, հեռագիրը—որոնք զանազան, նոյն իսկ ամենահեռաւոր համայնժների մէջ ստեղծում են սերտ յարաքերութիւններ և նախ-

կին համայնքների կօնգոմերատի փոխարէն ստեղծում են մի մեծ ազգային և պետական օրգանիզմ, որի ամեն մի անդամը անկարող է ապրել առանց միւսի։ Այդ պայմանները դեռ ևս գոյութիւն չունին թիւրքիայում, կամ գոյութիւն ունին շատ թոյլ կերպով։

Իսկ այն նահապետական դժբաղդ սօցիալ-անտեսական պայմանները, որոնց մէջ գտնւում է թիւրք գիւղացին, դարձնում են նրան մի անգոնական խեղճ արարած, զուրկ միանդամայն փոքր ի շատէ գիտակցական կոիւմելու ընդունակութիւնից։ Ճիշտ է, հարստահարութիւնը և հալածանքը տիրող դասակարգի կողմէց հասցնում են համբերատար թուրք գիւղացիութեանը երբեմն վրդովման աստիճանի, բայց այդ վրդովմունքը նա միշտ ուղղել է ամենաթոյլ դիմադրութեան ուղղութեամբ։ Անկարող լինելով գիտակցել իր դժբաղդութեան իսկական պատճառները, կամ ոյժ չունենալով դիմադրել ուժեղ թշնամուն—տիրող դասակարգին, թուրք գիւղացիութիւնը իր կատաղ ւթիւնը միշտ թափել է ստրուկ քրիստոնեայ ազգերի վրայ, որոնց վերաբերմամբ նա վայելել է տիրող ազգութեան արտօնութիւնները։

Այդպիսով թուրք գիւղացիութիւնը ոչ միայն ոչ մի յեղափոխական դեր չը կատարեց, այլ և գործիք հանդիսացաւ կուլտուրապէս աւելի բարձր ազգերին սուլթանական բռնապետութեան ձեռքին պահելու համար։

Աւելի ևս յետաղիմական դեր են կատարում թիւրքիայի թափառաշրջիկ (նօմադ) ցեղերը, յատկապէս քըրպերը, որոնք գտնւում են կուլտուրական այնպիսի պրիմիտիվ աստիճանի վրայ, որի հետ համեմատած միապետութիւնը հանդիսանում է աւելի բարձր քաղաքական ձև։

Քրդական ցեղերը, նոյնիսկ նստակեացները, որոնք դեռ վերջնականապէս չեն կորցրել թափառաշրջիկի վարենի հակումները ու հոգեբանութիւնը, — գտնւում են իրանց ցեղապետների՝ շէյխերի անսահման տիրապէտութեան ներքոյ։ Այդ կիսավայրենի ցեղերն են, որ ահա-

գին հարուածներ են հասցնում երկրի աւելի կուլտուրական ազգաբնակութեանը, գլխաւորապէս քրիստոնեաներին, իրանց անվերջ թալաններով։ Սակայն թալաներով քրիստոնեաներին, քրդական բայան այնուամենայնիւ իր անտեսական բարեկեցութեամբ ընդհանուր առմամբ աւելի ցածր է քրիստոնեաներից, որովհետև թալանների ամենամեծ մասը սովորաբար անցնում է ցեղապետների ձեռքը և վերջ ի վերջոյ քիւրդ գիւղացին և խաշնարածը վարում է ամենաթշուառ մի կենցաղ։

Քիւրդ ցեղապետների կազմակերպած այդ յարձակումները նստակեաց կուլտուրական համայնքների վրայ և նրանց յետեղ թալանները ստիպում են այդ վերջիններին մտնել որոշ յարաբերութիւնների մէջ իրանց հարևան ցեղապետների հետ և որոշ պարբերական տուրքով ազատել իրանց նրանց յարձակումներից։ Այդպիսով փաստօրէն ստեղծում է քրդական մի ուժեղ ֆեօդալական դաս, որ իր իշխանութիւնը տարածում է ոչ միայն քրդերի, այլ և հայերի և ուրիշ ազգերի վրայ։

Քրդական այդ ֆեօդալական շէյխերն են, որ ներկայացնում են իրանցից ամենայնտապէմ տարրը և ամենակատաղի ու համզուած թշնամիները սահմանադրական կարգերի։ Իսկ քրդական բայան, աւելի քան թուրք գիւղացիութիւնը զուրկ լինելով գիտակցութիւնից և գործիք հանդիսանալով յետաղիմական ոյժերի ձեռքին, կատարում է մի տիսուր գեր ոչ միայն իր վերաբերմամբ, այլ և իր շրջապատող կուլտուրական ազգութիւնների վերաբերմամբ։

Եւ այն չափով, ինչ չափով թուրք գիւղացիութիւնը և քրդական բայան չէին հասկանում իրանց դժբաղութեան հիմնական պատճառները և կոիւ էին մղում ամենաթոյլ ընդդիմազրութեան ուղղութեամբ, ինչ չափով քրիստոնեայ ժողովուրդները զգում էին իրանց վրայ ազգային ձնշում, այն չափով այդ ժողովուրդները իրանց դժբախտութեան պատճառը համարում էին օսուր «ժողո-

վըրդի» քաղաքական լուծը և ոչ թէ առհասսարակ տիրող քաղաքական կարգերը, և այդ պատճառով իրանց փրկութիւնը տեսնում էին սեփհական ազգային պետութեան մէջ։ Այդպիսով ահա Թիւրքիայում առաջ են գալիս ազգային շարժութեան ստեղծումը։ Բարեյաջող քաղաքական պայմանները հնարաւորութիւն են տալիս մի շարք ազգութիւններին անջատուել Թիւրքիայից և ստեղծել անկախ պետութիւններ։ Նրանց օրինակին աւելի ուշ հետևեցին և հայերը, ստեղծելով հայկական ազգային շարժում։ Միայն վերջին տարիները, երբ ոռուսական յեղափոխութիւնը որոշ չափով յեղաշրջեց հայկական շարժման գեկավարների մտքերը իսկ միւս կողմից թուրք ժողովրդի մէջ առաջ եկան նկատելի յեղափոխական տարրեր, շարժումը հայերի մէջ սկսեց կորցնել իր գույտ ազգային բնաւորութիւնը։

Ոչ ոք լրջութեամբ չէր վերաբերւում դէպի Թիւրքական յեղափոխական շարժումը մինչև 1907 թուի շարժումները արևելեան փոքր Ասիայի քաղաքներում, Վանում, Էրզրումում, Սիբաստիայում և այն, երբ հրապարակ իջաւ քաղաքային մանր և միջին բուրժուազիան (խոշոր բուրժուազիա Տաճկաստանում համարեա թէ չկայ, որովհետեւ եղած խոշոր կապիտալիստական ձեռնարկները պատկանում են երոպացիներին)։

Սակայն չը նայած որ մինչև յուլիսեան անցքերը համեմատաբար ամենից աչքի ընկնող յեղափոխական ակտերը կատարեց բուրժուազիան, այնուամենայնիւ նա այն ոյժը չէր, որը իրագործեց յուլիսեան յեղաշրջումը։ Բուրժուազիան Թիւրքիայում չափազանց թոյլ էր բուրժուական յեղափոխութիւնը ի կատար ածելու համար։

Թիւրքիայի յեղափոխութեան շարժիչ ոյժերը բոլորովին այն չեն, ինչ որ Ռուսաստանինը և 18-րդ ֆրանսիայինը։ Թիւրքիայի յեղափոխութեան մէջ ճակատագրական գեր կատարեցին այդ երկրի առաջարկութեան միացը իրեն։

մանները, այն է—Թիւրքիայի քաղաքական գրութիւնը և բոպական պետութիւնների շարքում։

Թանի որ կապիտալիզմը թոյլ էր Եւրոպայում և դեռ գոյութիւն չունէին ներկայ կատարելագործուած պատերազմական միջոցները, մշտական զօրքը և առհասարակ կապիտալիզմի ստեղծած ներկայ ահռելի միլիտարիզմը, Թիւրքիան ոչնչով յետ չէր մնում իր պատերազմական տեխնիկայով երոպական պետութիւններից, որովհետև այդ տեխնիկան երկու կողմից էլ համեմատաբար շատ նահապետական էր։ Այդպիսի պայմաններում ընական է, որ այն զօրքը կը յաղթէ, որը աւելի ուազմական յակումներ ունէ։ Թուրք ժողովուրդը, որ կազմուել էր կիսավայրենի թափառաշրջիկ ցեղերից, որոնց համար պատերազմը մի մշտական զբաղմունք է, այդպիսով ահազին առաւելութիւն ունէր երոպացիների հետ համեմատած։ Եւ զարմանալի չէ, որ օսմանցիները շատ կարճ ժամանակում տիրապետեցին Եւրոպայի մի խոշոր մասը։

Սակայն մինչդեռ Եւրոպական պետութիւնները անընդհատ առաջ էին գնում քաղաքակրթութեան մէջ, թուրքերը մնում էին իրանց նախկին կուլտուրական ցածրութեան վրայ։ Պատերազմի ժամանակ այնու անձնական քաջութիւնը այն նշանակութիւնը չունի, ինչ որ առաջ Այժմ գործ են տեսնում կատարելագործուած թնդանօթները և պատերազմողների մտաւոր ընդունակութիւնները։ Թուրքերը չունէին ոչ առաջինը և ոչ երկրորդը։ Եւ նրանք սահիպուած եղան քայլ առ քայլ յետ գնալ Եւրոպայից դէպի Ասիա։ Ամենից մեծ հարուածներ առւեց այդ կողմից Ռուսաստանը, որ Պետրոս Մեծի ժամանակից սկսել էր բարենորոգել իր կառավարչական սիստեմը երոպականի համեմատ։

Ունենալով մի զօրք, որ թէ քանակով և թէ որակով բարձր էր տաճկականից, 18-րդ դարի Ռուսաստանը մէկը միւսի յետեւից խլեց Տաճկաստանի մի շարք կարեոր մասերը և պետականօրէն միացը իրեն։

Սակայն Տաճկաստանի անկումը միայն տերբիտօրեալ անդամահատութեան եղանակով չէր սահմանափակվում:

Նորագոյն կապիտալիստական եւրոպան ստեղծել է տիրապետութեան մի նոր եղանակ, որը աւելի արագ է տանում գեպի կորուս թոյլ պետութիւններին, քան նախկին բոնի հպատակացման եղանակը։ Մինչև ներկայ կապիտալիստական շրջանը ամեն մի պետութիւն տարածում էր իր տիրապետութիւնը միայն բազմականորէն սալըրկացնելով որ և է երկիր, ինչպէս այդ անում են գեռմինչև այժմ բոլոր այն պետութիւնները, որոնց մէջ թոյլ է զարգացած կապիտալիզմը։ Սակայն ներկայ կապիտալիստական դարում քաղաքական տիրապետութիւնը շատ անդամ այնքան ձեռնտու չէ, որքան Տիեսական տիրապետութիւնը։ Այն ժամանակ, երբ տիրապետած ամեն մի երկիր պահանջում է ահազին ծախսեր այդ երկիրը կառավարելու համար, շատ անդամ աւելի մեծ ծախսեր, քան թէ նրանից կարելի էր ստանալ, որ միանդամայն ձեռնտու բան չէ ներկայ վաճառականական պետութիւնների համար, ընդհակառակն իրանց ապրանքները սպառելու համար ըուկանեց ձեռք բերելը գառնում է գերագոյն սպառակը այդ պետութիւնների համար։

Եւ երոպական կապիտալիստական պետութիւնները յառելով իրանց գիշտափիչ աչքերը երկրագնդի բոլոր մասերը հիմքալից շուկաներ գտնելու նպատակով, չէին կարող վրիպել մի այնպիսի համեղ պատառ, ինչպիսին է Թիւրքիան։ Այդ տեսակէտից ամենից շուտ և ամենից մեծ ուշադրութեան Թիւրքիան արժանանում է իհարկէ Անգլիայի կողմից, որպէս կապիտալիստականորէն ամենից զարգացած և ուժեղ երկրից 19-դ դարում։ Որպէսպի կարողանար Թիւրքիան գարձնել իր շուկան, Անգլիան պէտք է նախ և առաջ աշխատէր կանգնեցնել Ռուսաստանի առաջադադայն կուլ տալ այդ երկիրը։ Պաշտպանելով Թիւրքիային գիտականական բարգութիւնների ժամանակ ուղարկում է Անգլիան Տաճկաստանի առաջադադայն կուլ տալ այդ երկիրը։ Պաշտպանելով Թիւրքիային գիտականական բարգութիւնների ժամանակ ուղարկում է Անգլիան։

սական վտանգից, Անգլիան միաժամանակ ձգտում էր ուժեղացնել Թիւրքիայի վարչական մեխանիզմը այնքան, որպէսպի նա կարողանար գիմագրաւել Ռուսաստանի ուղըն ձգութիւններին։

Թիւրքիան իր քաղաքական գոյութիւնը պահպանելու համար պէտք է երոպականանար։ Այդ բանը ըմբռնում էին Թիւրքիայի վարիչները, բայց միանդամայն երոպականանալ ձեռնտու չէր նրանց համար, և ահա, առանց երկրի իրաւակարգը փոխելու, սուլթանական կառավարութիւնը սկսում է վերակազմութեան ենթարկել իր պատերազմական ոյժերը։ Իր հարկան պետութիւնների օրինակով նա ստիպուած է պահել մի հսկայական մեսական զօրք իր բոլոր անհրաժեշտ պարագաներով՝ թնդանոթներով, պատերազմական նաւատօրմիզով և այն, որը նրանից պահանջում է Թիւրքիայի պէս մի յետամեաց երկրի համար ըլ տեսնուած գումարներ։ Լինելով բնական տնտեսութեան մի երկիր, զուրկ միանդամայն կապիտալից, Թիւրքիան ստիպուած էր անհրաժեշտ հսկայական դումարները փոխ առնել երոպական բանկիրներից։

Բայց որովհետեւ Թիւրքիան այդ գումարները գործադրում է ոչ թէ տեղական արդիւնաբերութիւնը զարգացնելու վրայ, այլ մի այնպիսի անարդիւնք զործի վրայ, որպիսին է միլիտարիզմը, ազգա այդ երոպական կապիտալը Թիւրքիայի համար գանձնում է մի սոսկալի չարիք, որպէս վաշխառուական կապիտալ, որ գործադրուում է ամենաաննպաստ պայմաններում։ «Այստեղ, ուր արդիւնաբերական կապիտալը գոյութիւն չունի, — ասում է Մարքսը, — այդպիսի երկիրներում վաշխառուական կապիտալը ծծում է ազգաբնակութեան վերջին հիւթերը, ոչընչացնում է նրա արտադրական ոյժերը և տանում է գեպի տնտեսական քայլայում։ Վաշխառուական կապիտալը չի փոփոխում արտադրութեան գոյութիւն ունեցող ձեր երկրի մէջ, այլ միայն քայլայում է նրան»։

Երոպական կապիտալի միւս ձեր Թիւրքիայում վա-

ճառականական կապիտալն է, բայց նա նոյնպիսի քայշ քայիչ գեր է կատարում, եթէ գոյութիւն չունի տեղական արդիւնաբերութիւն։ Եւրոպական վաճառականութիւնը և Եւրոպայից պարտք վերցրած կապիտալը միայն այն դէպօւմ կարող էին դրական, օգտահատ գեր կատարել, եթէ նրանք նպաստէին տեղական արդիւնաբերութեանը։ Բայց ինչպէս տեսանք, դրսից եկած կապիտալները գործադրում են միանգամայն անարդիւնք ձեռնարկների վրայ։

Եւ ոչ միայն այդ։ Նոյն իսկ իրանք, երոպական կապիտալի ներկալացուցիչները ամեն կերպ աշխատում են անհար դարձնել Թիւրքիայում տեղական արդիւնաբերութեան զարգացումը։ Զգտելով ձեռքից բաց չը թողնել թիւրքական շահաւէտ շուկան, նրանք իրանց կառավարութիւնների միջոցով ստիպում են Թիւրքիային ազատ պահել Եւրոպայից եկող ապրանքները մաքսից, որ ինարկէ համահաւասար է տեղական արդիւնաբերութեան ոչընչացման։

Այդ բոլորի հետեւանքը լինում է այն, որ յաւելեալ արժէքի ամենամեծ մասը, որ արտադրում են աշխատաւոր մասսաները, մտնում է ոչ թէ Թիւրքիայի տիրող դասակարգերի զբանը, այլ անցնում է Եւրոպայի կապիտալիստների ձեռքը։ Երկիրը ընկնում է մի ընդհանուր աղքասութեան մէջ, որից տուժում է ամբողջ ազգաբնակութիւնը, առանց դասակարգերի խարութեան։

Խրուած միանգամայն պարտքերի մէջ, ծայրայեղ թշուառութեան հասած Թիւրքիան դառնում է մի խաղալիք իր կրեդիտօրների—երոպական կապիտալիստների ձեռքին, որոնք զցած նրան իրանց կրեդիտային ցանցերի մէջ, ոչ միայն «ծծում են նրա վերջին հիւթերը», այլ և փաստորէն գերիշխանութիւն են ձեռք բերում պետական գործերում։

Ենուած իրանց պետութիւնների զինուած ոյժի վրայ, նրանք նորանոր մենաշնորհներ են ստանում այս այն շահաւէտ ձեռնարկների համար, ինչպէս են եր-

կաթուղիները և այն։ Իսկ միւս կողմից երկրի օրէնքները երոպացիների համար գոյութիւն չունին, նրանք բարձր են այդ օրէնքներից և ազատ են որ և է տուրքից։

Այդպիսով տնտեսապէս նուաճելով երկիրը, երոպական կապիտալիստները դառնում են Թիւրքիայի վաստական տէրերը։ Կորցնելով իր տնտեսական անկախութիւնը, Թիւրքիան օր է ցօր կորցնում է իր քաղաքական ինքնուրոյնութիւնը։ Շատ քիչ բան էր մնացել այդ քաղաքական անկախութիւնից, և այդ մնացորդն էլ վաղուց արդէն վերացած կըլինէր, վաղուց արդէն Թիւրքիան պատառ-պատառ եղած կըլինէր, եթէ գոյութիւն չունենար պետութիւնների հակամարտութիւնը։

Այդ աննախանձելի դրութիւնը ստիպում է Թիւրքիայի վարիչներին ընդառաջ գնալ Անգլիայի խորհուրդներին և ժամանակակից իրաւակարգ մտցնելու փորձեր անել։ Սուլթան Աբդուլ Միջիդը գահ բարձրանալիս յայտարարում է հոչակաւոր «թանգիմաթը», որի հիման վրայ Թիւրքիայում պէտք է մտցնուէին բեֆօրմներ։ Սակայն նախ այն հանգամանքը, որ շտատով քաղաքական մթնութրդը պարզում է յօգուտ Թիւրքիայի, երկրորդ՝ բեֆորմները չէին բղխում երկրի սօցիալ-տնտեսական պահանջներից և վերջապէս հէնց ինքը կառավարութիւնը շատ էլ համակիր չէր իր նորամուծութիւններին, — բեֆօրմները մոռացւում են և հին բեֆիմը մնում է իր նախկին իրաւունքների մէջ։

Նոյն կօմեդիան կրկնում է և 1876 թուին, երբ Թիւրքիան ապրում էր վտանգաւոր մօմենտներ։ Մուսաստանը, առիթ բոնած ոլաւօնական ազգութիւնների ծայրայեղ թշուառութիւնները Թիւրքիայում, կամենում էր նոր հարուածներ հասցնել Թիւրքիային։ Աբդուլ Համիդը, որ նոր էր գահ բարձրանում, յայտարարում է Միջիադեան սահմանադրութիւնը։ Սակայն քաղաքական բարդութիւնները վերջանում են, մոռացւում է և սահմանադրութիւնը, Աբդուլ Համիդը հրամայում է արձակել պար-

լամենտը, և պարլամենտականները սուս ու փուս գնում են իբենց աները:

Սակայն այդ ժամանակները տաճկական տիրող շըրջաններում սահմանադրութեան անհրաժեշտութեան միտքը արդէն բաւական հասունացած էր: Այդ շըջաններից դուրս եկած մի շարք կրթուած անհատներ պարզ գիտակցում էին, որ առանց երուական իրաւակարգի Թիւրքիան կորած է:

Պարլամենտի արձակումը առիթ է տալիս խուլ խլըրտմանը կրթուած շըջաններում:

Սուլթանական բոնապետութեան ամենաուժեղ ժամանակներն էլ սուլթանները ենթակայ են եղել պալատական դաւադրութիւնների, երբ այս ու այն արքայազնը ձգտել է գահընկէց անել իշխող սուլթանին և նրա տեղը բռնել: Անա թէ ինչու սուլթանները միշտ կասկածուած են եղել գէպի իրենց շրջապատողները և կատաղի գէպի կառկածի տակ ընկածները:

Արգուլ Համիդի օրով սուլթանի այդ անձնական թըրժամիններին աւելանում են և նրա, որպէս սուլթանական բոնապետութեան ներկայացուցչի, թշնամինները: Անա թէ ինչու ներկայ սուլթանի կասկածները և կատաղի հալածանքը շրջապատողների վերաբերմամբ համառմ է չը տեսնուած չափերի:

Արջք օրհասականք հզօրագոյնս կռուեն:

Այդպէս միշտ կատաղի է եղել մեռնող բեժիմը ամենուիք:

Պօլսի նախկին սուլթանական պալատները վերածւում են մի բանտերի, որտեղ Արգուլ Համիդը բանտարկում է թափառրական տան բոլոր կասկածելի անդամներին: Աներևակայելի չափերի է համառմ լրտեսական խումբը, որը խլըրտում էր բարձրաստիճան շրջաններում: Բազմաթիւ անձինք այդ շրջաններից աքսորի և մահուան են գտապարտում:

Սուլթանական դեսպօտիզմը համառմ է իր գագաթնակէտին:

Եւ ահա այն ժամանակ, երբ ազատութեան մասին գաղափարը չունեցող և հուր հպատակութեան սովոր ժողովական մասսաները քնած էին, տրող դասակարգը, թէկ դանդաղ, բայց գալիս է այն եղբակացութեան, որ պետութիւնը դադարում է ծառայիլ նրա շահերին, որ երկրի պետը այդ տիրող դասակարգի ծառայից աննկատելի կերպով դարձել է նրա հրամայողը, որ սուլթանը միայն թագաւորում է, այլ և ինքնիշխան կերպով կառավարում է երկիրը, մի բան, որ ոչ մի տիրող դասակարգ չէ կարող թոյլ տալ իր գլխաւորին, որովհետև զրանով նա դադարում է այլևս տրող դասակարգը լինելուց:

Սուլթանի անձնական այդ բեժիմը խիստ անբաւականութիւն է առաջացնում բարձրաստիճան շրջաններում: Դէպի Արգուլ Համիդը տածած այդ ատելութիւնը ահազին հող է պատրաստում երիտասարդ թուրքերի վերանորոգիչ գաղափարների համար:

Եւ այդպիսով Պօլսի արքայական և արիստօկրատիական այն պալատներում, ուր սկիզբ է առել մեր ժամանակների ամենամեծ բոնապետութիւնը և հասել իր գագաթնակէտին, ահա հէնց այդտեղ ծնունդ է առնում և բեակցիան ընդդէմ բոնապետութիւնը:

Երիտասարդ թուրքերի հետ սուլթանը վարւում է շատ հասարակ կերպով: Նա նրանց թափում էր Մարմարեան ծովը:

Սակայն չը նայած այդ սոսկալի հալածանքներին, երիտասարդ թուրքերը միշտ դեկավարում էին անարխին տակտիկայով, որով նրանք դժգոհութիւն էին հարուցանում Թիւրքիայի միւս յեղափոխական կուսակցութիւնների մէջ: Այս վերջինները, մասնաւորապէս Դաշնակցութիւնը, պահանջում էին նրանցից «կենդանի գործ», բայց որովհետև նրանք այդ «կենդանի գործ» ցոյց չէին տալիս, ապա երկար ժամանակ արժանառում էին արհամարանքի:

Եւ մինչև վերջին մօմենտը ոչ ոք, նոյն իսկ պաշտօնական Եւրոպայի փորձուած ներկայացուցիչները լուրջ նշանակութիւն չէին տալիս երիտասարդ թուրքերի գործունէութեան, զնորհիւ նրանց այդ ինքնուրոյն տակտիկայի:

Սակայն երիտասարդ թուրքերը միանգամայն աղջարացի էին իրանց տակտիկայի մէջ։ Նրանք շատ լաւ էին գիտակցում, որ թուրք ցեղի մէջ, որի ձեռքին է գտնւում կառավարչական մեխանիզմը, չը կայ մի դասակարգ, մի փոքր ի շատ է խոշոր սօցիալական խաւ, բացի սուլթանական կամարիլլայից, որոնց շահերը պահանջէին անսահման բոնտապետութեան պահպանումը։ Նրանք շատ լաւ էին հասկանում, որ բաւական է տիրող դասակարգի կողմից լոկ գիտակցութիւն սեփական շահերի, որպէսզի կործանուի սուլթանի անձնական ըեժիմը։

Սակայն սեփական շահերի այդ գիտակցութիւնը չէր կարող չը բերել տիրող դասակարգին և մի սուրբ եղանակցութեան։ Այդ գիտակցութիւնը չէր կարող չը թելադրել նրան, որ սուլթանի անձնական ըեժիմի վերացմամբ միանգամայն չէր ամրապնդում տիրող դասակարգի գոյութիւնը։ Այդ դասակարգը կարող է գոյութիւն ունենալ միայն այն գէպքում, եթէ գոյութիւն կունենայ ինքը թիւրքիան։ Մինչդեռ թիւրքիայի քաղաքական ինքնուրոյնութիւնը ենթարկուած է վտանգի։ Նրան վրկելու համար անհրաժեշտ էր աւելի մեծ փոփոխութիւններ կառավարչական մեխանիզմի մէջ, քան սուլթանի անձնական ըեժիմի վերացումը։

Եւ ահա տիրող դասակարգը, համոզուելով այն բանի մէջ, որ անհրաժեշտ է սուլթանի իրաւունքները սահմանափակել, գալիս է նաև իր համար այն անհամոյ եղանակցութեանը, որ թիւրքիայի քաղաքական անկախութիւնը անխուսափելի կործանումից ազատելու համար, այսինքն իր իսկ սեփական գոյութիւնը պահպանելու համար, անհրաժեշտ է և իրեն հրաժարուիլ իր արտօնութիւնների մի որոշ մասից։

— Եթէ մենք ազատութիւն չը տանք տաճկական կապիտալին, մինոյն է՝ երողական կապիտալը մեզ կուզ պիտի տայ, — այսպէս էր դատում թուրք տիրող դասակարգը, — բխ ուկրատիա, սպայական դաս, հոգևորականութիւն, — յանձին երիտասարդ թուրքերի աջակողմեան թելի, որը ներկայացնում է իրանից այդ դասակարգի ամենից գիտակցու և գործօն մասը։

«Անկարելի է երևակայել, — ասում է Հասսալը, — թէ բարբարոսութեան ո՞ր աստիճանի վրայ կը գտնուէր մարդկութիւնը դեռ մինչև հիմայ, եթէ անյիշելի ժամանակներից նախանձը և հակառակութիւնը առանձին պետութիւնների մէջ չէ հանդիսանային ամենամեծ միջոցը նրանց ներքին առաջադիմութեան զարգացման համար»։

Այդ նախանձը և հակառակութիւնն է, որ ստիպում է թուրք տիրող Փեօդալական խաւերին կատարել մի յեղափոխութիւն, որ միաժամանակ և ամենամեծ հարուածն է նրանց սօցիալական տիրապետութեան։ Այդ յեղափոխութեան անունն է բուրժուական յեղափոխութիւն, որ բաղդի մի սպանիչ իրոնիայով կատարում է այն իսկ դասակարգը, որ բոլոր քաղաքակարգի երկիրներում եղել է բուրժուազիայի կատաղի թշնամին, ապա ուրեմն բուրժուական յեղափոխութիւնների ամենամեծ պատնէշը։ Ժամանակի ընթացքում այդ նոյն յետադիմական զերը պէտք է կատարեն և թիւրքիայի Փեօդալական խաւերը այն չափով, որ չափով սահմանադրական-բուրժուական կարգերը կամրանան և թիւրքիան կազմադրուէ երողական պետութիւնների գերիշխանութիւնից։

Սահմանադրութեան հրատարակման հէնց առաջին օրերից արդէն սկսեցին ուժեղ կերպով արտայայտուել երիտասարդ թուրքերի այդ յետադիմական անդամները։ Նրանք ամեն կերպ ձգտում են նոր իրաւուկարգը յարմարեցնել իրանց դասակարգի տիրապետութեանը, բայց այդ կը յաջողուի նրանց միայն մինչև այն ժամանակ, քանի որ նոր իրաւուկարգի օրինաւոր տէրը դեռ ևս անշափա-

հաս դրութեան մէջ, է քանի որ բուրժուազիան դեռ կազմակերպման շըջանի մէջ է գտնուում:

Երիտասարդ թուրքերի ստեղծած իրաւակարգը առաջ կը բերի տեղական խոշոր ինդուստրիա, տնտեսական գերիշխանութիւնը կանցնի բուրժուազիայի ձեռքը, և ֆեոդալական տարրերը մի գեղեցիկ օր իրանց կը զգան ընկած յետին շարքը:

Բուրժուազիայի յետեից հրապարակ կիջնէ պրօլետարիատը, և կը սկսուի պայքարը սօցիալական կեանքի աւելի բարձր ձևի համար, քան բուրժուականը:

Այդպէս կը լինի, եթէ միայն «նախանձը և հակառակութիւնը» երոպական պետութիւնների կողմից չը գանքանդելու երիտասարդ թուրքերի ստեղծածը:

Բայց և միջազգային բարդութիւնների դէպքում հազիւ թէ Թիւրքիան վերագառնայ իր նախկին դըութեան: Աւելի հաւանական է, որ նա կենթարկուի բաժանումների պետութիւնների կողմից: Այսպէս թէ այնպէս Թիւրքիայի բռնապետութիւնը հազիւ թէ կարողանայ, թէկուզ կարճ ժամանակով, վերականգնել իր նախկին զօրութեամբ:

Սկսած այն օրից, երբ օսմանեան բռնապետութիւնը թուրք ժողովրդի հետ միասին միևնույն լծի տակ լծեց նաև հայերին, այս վերջինների մէջ առաջ եկան անջատողական ձգտումներ: Դուրս գալ այդ լծի տակից և վերականգնել հայկական անկախութիւնը ձգտում էին ոչ միայն հայկական բարձր խաւերը, որոնք զրկուել էին իրանց նախկին արտօնութիւններից, այլ և հայ աշխատաւոր ժողովուրդը, որը վերադառնում էր «հայրենի» լուծը «օտար» լծից: Դա առաջանում էր իհարկէ ոչ թէ պլատոնական հայրենասիրութիւնից, այլ այդ աշխատաւորութեան ամենաախական շահերից: Մի ժողովուրդ, որ վարել էր երկարատև նստակեաց կուլտուրական կեանք, ստիգմատած էր առաջ ընթանալ իր հարեան թափառական, կիսաթափառական կամ նստակեաց, բայց կուլտուրական աւանդութիւններից զուրկ քիւրդ և թուրք ժողովուրդների հետ միասին: Բարձրացնել այդ հարեաններին մինչև իրանց կուլտուրական աստիճանը հայերը հնարաւորութիւն չունէին: Մնում էր կամ յետ գնալ կուլտուրապէս, կամ հրաժարուել նրանց հարեանութիւնից: Եւ մի քանի դար շարունակ՝ սկսած հայկական թագաւորութեան կործանումից՝ հայկական առաջաւոր միտքը միայն մի նպատակ ունէր գրած—ստեղծել հայկական անկախութիւն:

Այդ նպատակին համար հայերը չը ստեղծեցին մի նոր քաղաքական կազմակերպութիւն, որովհետեւ դա գժուար էր տիրող սոսկալի պայմանների շնորհիւ: Բայց նրանք իրանց նպատակին յարմարեցրին արդէն գոյութիւն ունեցող մի կազմակերպութիւն, որը ուժեղ արմաներ ունէր ժողովրդական կեանքում: Դա եկեղեցին էր, որը կրօնական արտաքինի տակ առաջ էր տանում մի քաղաքականութիւն, որը ամենից քիչ կրօնական բնաւորութիւն էր կրում: Ազգային-կրօնական ձևի տակ առաջ

էր մղւում մի պայքար տնտեսապէս, սօցիալապէս և առհասարակ կուլտուրապէս տարբեր աստիճանների վրայ գտնող երկու ազգերի մէջ։ Ահա թէ ինչու հայկական եկեղեցին ժամանակի ընթացքում կորցրեց որոշ չափով իր զուտ եկեղեցական ընաւորութիւնը և գարձաւ ժողովրդական մի հաստատութիւն և միաժամանակ ահա թէ ինչով է բացատրւում, որ հայերը, համեմատաբար շատ էլ աստուածապաշտ ժողովուրդ չը լինելով, այնքան ֆանատիկուաբար կապուած են եկեղեցու հետ։

Հայկական անկախութեան գաղափարը առաջին անգամ սկսում է կորցնել իր սուր նշանակութիւնը Ռուսաստանի հրապարակ գալովը հայկական սահմաններում։

Իհարկէ ոչ թէ ընդհանուր կրօնը, քրիստոնէութիւնը, այլ հայկական և ռուսական կուլտուրաների համեմատաբար ընդհանուր մակերեսոյթն էր պատճառը, որ Ռուսաստանը մագնիսի պէս քաշեց դէպի իրան հայերին։

Ռուսական սահմաններում առաջ եկաւ մի խոշոր հայկական վաճառականական դաս իր ինտելիգենցիայով հանդերձ 70-ական թուականները վերջերքը, երբ Ռուսաստանի և Թիւրքիայի ծայրայեզրութեան հասած հակամարտութիւնը մի շատ բարեպատեհ առիթ էր ստեղծել «արևելեան քրիստոնեանների» ազատազրման համար, Թիւրքիսի հայ բուրժուական հասարակութիւնը պատզամաւորութիւն է ուղարկում կովկասեան փոխարքայի մօտ և միաժամանակ ուղերձ է ներկայացնում Ալեքսանդր Ա-ին, խնդրելով ուսւ կառավարութեան վերցնել իր վրայ հայերի աղատազրման գործը։ Հայ հասարակութիւնը իր այդ ուղերձի մէջ պնդում էր, թէ ինքը առաջնորդւում է միայն մարդասիրական զգացումներից։ Բայց դա սխալ է։ Իհարկէ, մարդասիրական մօմենտը չէր կարող դեր չը կատարել ի տես այն տանջանքների, որ կրում էին տաճկահայերը։ Սակայն հայ հասարակութեան ոգեորութեան մէջ մեծ գեր էր կատարում բօմանտիքական նացիօնալիզմը, որը գաղափար գաղափարը նացիօնալիզմը, երկար գարերի ընթացքում հայերը, ձգտելով թօ-

թափել յետամնաց քաղաքական լուծը, փրկութիւնը որոշնում էին հայկական անկախ թագաւորութեան մէջ և իրանց իդեալը որոնում էին «Բագրատունեաց, Ռուբինեանց հարստութիւնների» մէջ, այսինքն անցեալի վերակենդանացման մէջ։ Երկարատև ստրկութեան ժամանակաշրջանում անցեալի այդ գաղափարականացումը անպայման բղխում էր ժողովրդի իրական շահերից, որովհետև մի «Բագրատունեաց հարստութիւն» նրա զարգացման համար աւելի աղատ պայմաններ պէտք է ստեղծէր, քան սուլթանական բռնապետութիւնը։ Հայկական նացիօնալիզմը, այդպիսով ներկայացնում էր իրանից մի առողջ և առաջադիմական երեսյթ, քանի որ այդ նացիօնալիզմի ձեւով արտայայտում էր մի զուտ ազատազրական շարժում, ընդդէմ կաշկանդող սուլթանական կարգերի։ Սակայն եթէ հայկական թագաւորութեան վերակենդանացումը յառաջադիմական մի երեսյթ էր նամեմատած սուլթանական բռնապետութեան հետ, այդ չէ նշանակում, թէ նա այդպէս է և առհասարակ ամեն տեսակ պայմաններում։ Ահա այդ հանգամանքն է, որ ժամանակի ընթացքում մոռացութեան է տրում, և այն, ինչ մի ժամանակ ծառայում էր լոկ միջոց նպատակին համելու համար, այժմ դառնում է ինքնանփոփ մի նպատակ։ Մարդիկ սկսում են մտածել, որ ազգային ինքնուրոյնութիւնը, և առհասարակ ազգայինը մի գերազոյն բարիք է՝ անկախ ժամանակի ու տարածութեան պայմաններից։

Ահա թէ ինչու հայկական անկախութեան տեսչերը, քաղցր երազները բոլորովին չը թողեցին հայ ժողովրդի այն մասին, որը ազատուելով տաճկական լուծից, մտել էր ռուսական տիրապետութեան տակ։ Եւ կովկասեան հասարակական շարժման մէջ 70 թուականների վերջին անպայման մեծ գեր էին կատարում անցեալի աւանդութիւնները, բօմանտիքական նացիօնալիզմը, որը կարուած վինելով կեանքի իրական պահանջներից, խանգարում էր առաջադիմական մտքի աղատ զարգացմանը և, ստեղծե-

լով անհիմն իլլիւզիաներ, հասարակական շարժմանը տալիս էր սխալ ուղղութիւն:

Սակայն բացի մարդասիրութիւնից և քօմանտիզմից մեծ գեր էին կատարում կովկասեան բուժութական հասարակութեան շարժման մէջ նաև պրօզափիլ մօտիվները, այն է՝ զուտ վաճառականական հաշիւներ, սեփական շահը, որ, հաւանական է, լաւ չէին գիտակցում իրանք՝ ուղերձի հեղինակները:

Եւ ոչ միայն հայ վաճառականն էր նայում ազատագրուած Տաճկաստանի վրայ, որպէս ուկայի վրայ, այլ նոյն իսկ այսպէս կոչուած ինտելիգենցիան, որի գաղափարականութիւնը ըստ երեսյթին բարձր է ամեն մի կասկածից:

Կովկասահայ ինտելիգենցիայի Տաճկահայաստանի ազատագրման գաղափարով տարուելը, բուռն կերպարանը է ընդունում մանաւանդ 80-ական թուականների կիսից. Երբ առաջին անգամ ուռւ կառափարութիւնը փոխում է իր աւանդական վերաբերմունքը դէպի հայերը, սկիզբ զնելով հայահալած քաղաքականութեան: 1885 թուին կառավարչական հրամանով փակուեցին հայոց գլորոցները, և թէ նրանք հետեւել տարին նորից բացուեցին, բայց արդէն ուշ էր, — հայկական մտաւորական շրջաններում դէպի Ռուսաստանը տածած աւանդական վերաբերմունքը արմատապէս փոխուած էր: Հաւատը դէպի Ռուսաստանը, որպէս հայ ժողովրդի պաշտպանը, կորչում է յատկապէս ինտելիգենցիայի մէջ ոչ միայն այն պատճառով, որ նա ժողովրդի ամենից գիտակից մասն է, այլ և այն պատճառով, որ հայահալած քաղաքականութեան հարուածները տուածին անգամ հասան հայկական կուլտուրական հաստատութիւններին, որի չնորհիւ անմիջական տուժողը եղաւ ինտելիգենցիան: Եւ նոյն իսկ անկախ ազգային հալածաբարից, հայ ինտելիգենցիան, ինչպէս և ուռւական ինտելիգենցիան, չէր կարող չը նկատել, որ ուռւական բիւրօն կրատական կարգերը մի մեծ խոչընդու են երկրի կուլ-

տուրական կեանքի զարգացման, մինչդեռ այս վերջինովս է պայմանաւորւում ինտելիգենցիայի բարեկեցութիւնը: Եւ ահա հայ ուսուցիչը, որ ասպարէզ չունի իր աշխատանքը գործազրելու և թէ ֆիզիքապէս, թէ հոգեպէս արժանավայել կեանք վարելու, և հայ գրականագէտը, որի գրուածները ժողովրդի անգրագիտութեան պատճառով գնողներ չեն գտնում, իսկ ինքը կիսաքաղցած կեանք է վարում, և հայ դերասանը, և հայ նկարիչը — ամենքն էլ տրամադրուում են թշնամաբար դէպի ոուս կառավարութիւնը: Սակայն այդ թշնամութիւնը չի ծնում կոիւ ընդդէմ կառավարութեան, այլ ստանում է մի այլ ուղղութիւն: Ռուսաստանը մի աշխարհասասան պետութիւն, իսկ հայերը մի չնչին ժողովուրդ — այսպէս էր դատում հայ մանը բուրգուական ինտելիգենցիան: Իսկ միւս կողմէց «Նարոդնայա Վոլխայի» հերոսական անյաջողութիւնները և ոուս հսկայ գիւղացիութեան անվրդով խաւարը (թէ կապիտալիզմը և թէ պրօլետարիատը այն ժամանակ չափանց թոյլ էին) հայ ինտելիգենցիային միայն մի եզրակացութեան էին բերում — որ ոուս ժողովուրդը անընդունակ է առնասարակ յեղափոխութիւն առաջ բերելու և եթէ նոյն իսկ շատ հեռու ապագայում տեղի ունենայ այդ յեղափոխութիւնը, այնուամենայնիւ ազգային հալածանքը չը պիտի վերանայ հայերից: Այդպիսով մետափիզիքական նացիօնալիզմը, այն նացիօնալիզմը, որ ազգային գաղափարը համարում է մի ինքնանպատակ, կուրացրել էր հայկական հասարակական միտքը, և հայ մտաւորականների համար երկար ժամանակ աննկատելի մնաց այն հասարակական յեղաշրջումը, որ կատարւում էր Ռուսաստանում օր է ցօր կապիտալիզմի դանդաղ, բայց յարածուն զարգացման ազգեցութեան տակ: Հայկական նացիօնալիստական միաքը, տարուած ազգային բթացնող գաղափարով, մարդկութիւնը բաժանում էր ազգերի և ուստաների, այս ինչ ազգին կամ ուստային վերաբերելով դրական, իսկ միւսին բացասական յատկութիւններ: Բայ այդ

նացիօնալիստական թէօրիայի սօցիալական կեանքը երկրորդական գեր է կատարում, մինչդեռ իրօք սօցիալանտեսական կեսնքն է, որ այս կամ այն ժողովրդին տալիս է այս կամ այն ազգային գունաւորումը, և սօցիալանտեսական կեանքի փոփոխութեամբ է, որ փոփոխում են և այն «ազգային առանձնայատկութիւնները», որոնք ըստ նացիօնալիստական թէօրիայի այս կամ այն ազգի ու ուստայի մշտնջենական սեփականութիւնն են ներկայացնում:

Եւ հայկական նացիօնալիստական միտքը որոշեց՝ ոչ ուուս ժողովուրդը և ոչ էլ տաճիկ ժողովուրդը ընդունակ չեն առաջադիմելու և յեղափոխուելու։ Եւ որովհետեւ անհնար է Ռուսաստանի տիրապետութիւնից ազատազրել Ռուսահայաստանը, միակ փրկութիւնը մնում է Տաճկահայաստանի մէջ, որի անջատումը «Հիւանդ մարդու» տիրապետութիւնից և անկախութեան հաստատումը անհամեմատ աւելի դիւրին էր։

Եւ ահա ստեղծում է հոչակաւոր նշանաբանը—Ռուսաստանում մենք ապագայ չունենք, մեր փրկութիւնը Տաճկահայաստանի մէջ է։ Այդ գաղափարին յարում են ժամանակի ընթացքում մասն խանութպաններ, արհեստաւորներ, որոնց կապիտալիզմի յարածուն զարգացումը տնտեսական տագնապի մէջ էր գցել։

Սակայն կապիտալիզմի հէնց այդ զարգացումն է, որ մի կողմից ուժեղացնելով նացիօնալիստական շարժումը մասն բուրժուական էլեմենտներով, միւս կողմից խլեց նացիօնալիզմի գրկից բուրժուազիայի մի խոշոր մասը, այն է՝ արդիւնաբերական խոշոր բուրժուազիային և այդ բուրժուազիային ծառայող այսպէս կոչուած լիբերալ ինտելիգենցիային—բժիշկներ, փաստաբաններ, ինժեներներ և այլն։

Մասնաւորապէս նաւթային արդիւնաբերութիւնը ստեղծում էր համառուսական և համաշխարհային յարաբերութիւններ, որոնք և զարկ էին տալիս միջազգայինու-

թեան գաղափարին հայկական խոշոր բուրժուական շրջաններում և այդ բուրժուազիայի ծոցում փափուկ տեղաւորուած բուրժուա ինտելիգենցիայի մէջ։

90-ական թուականների երկրորդ կիսիցն էր, երբ մի կողմից հայկական կապիտալի աչքի ընկնող յաջողութիւնները կովկասում, իսկ միւս կողմից տաճկահայ շարժման սոսկալի անաջողութիւնները Տաճկահայաստանում և յոյսերի միանգամայն ի դերև ելնելը հայ բուրժուազիայի և մասնաւորապէս լիբերալ ինտելիգենցիայի մէջ առաջ են բերում կօմօպօլիտական ուղղութիւնը ընդդէմ մանր բուրժուական դեմօկրատական ինտելիգենցիայի (հայ գլոբոների ուսուցիչներ, գրականագէտներ և այլն) նացիօնալիստական ուղղութեանը։

«Այստեղ մենք մեզ լաւ ենք զգում, այստեղ էլ մենք կարող ենք լաւ ապրել»—կարծես ասելիս լինէր հայ բուրժուազիան և նրա հետ միասին լիբերալ ինտելիգենցիան։

«Դա դաւաճանութիւն է»—պատասխանում էր գեմօկրատական ինտելիգենցիան ամբողջ գեմօկրատիայի բերանից, որի մէջ խօսում էր դասակարգային բնագիրը, բայց որը զուրկ էր դասակարգային գիտակցութիւնից և հասարակական օրէնքների ճիշտ ըմբռնողութիւնից։

Ահա թէ ինչու, երբ հէնց այդ իսկ ժամանակները կովկասում հարապարակ եկան սօցիալիզմի առաջին հայ նախակարապետները, նրանք ևս դասուեցին նոյն այդ «դաւաճանների» շարքը։ Թէ բուրժուազիան, և թէ պլութուարիատը ծնունդ են միևնույն կապիտալիստական կարգերի և որքան ինդիքը վերաբերում է կապիտալիզմի թշնամիներին, նրանք համերաշխ են։ Բացի դրանից այդ ժամանակ սօցիալիզմը անց էր կացնում իր գեռ ևս տեսական շրջանը, և սօցիալիստական քննադատական գրականութիւնը նոյնքան յաջողութեամբ զէնք էր ծառայում ընդդէմ հայկական նացիօնալիզմի սօցիալիստների ձեռքին, որքան և լիբերալ ինտելիգենցիայի ձեռքին։ Եւ որովհետեւ առաջին հայ սօցիալիստները իրանց գործունէութիւնը սկսեցին

կօսմօպօլիտիզմի քարոզով, ապա շատ դժուար էր որոշել, թէ որտեղ է վերջանում բուրժուական լիբերալիզմը և որտեղ է սկսում սօցիալիզմը։ Ահա թէ ինչու 90-ական թուականների վերջերքին և 1900—1902 թուականներին հայ ինտելիգենցիան երկու բանակի էր բաժանուած՝ դեմօկրատական-նացիօնալիստական և լիբերալ-սօցիալիստական։ Միայն այն ժամանակ, երբ սօցիալիզմը մտաւ իր գործնական ուղին, իդեոլոգների փոխարէն հրապարակ իջաւ ինքը բանւորութիւնը իր շօշափելի պահանջներով, — այդ ժամանակ արդէն լիբերալ ինտելիգենցիան զգաց, որ լիբերալիզմի և սօցիալիզմի մէջ գոյութիւն ունին ամբողջ խորխորատներ, և ընդհակառակն՝ լիբերալիզմը դեմօկրատական նացիօնալիզմի հետ ոչ միայն շատ ընդհանուր կողմեր ունի, այլ և այդ դեմօկրատական նացիօնալիզմը այժմ ինքը կարող է զէնք ծառայել բուրժուազիայի ձեռքին ընդդէմ սօցիալիզմի։

Եւ ահա այն իսկ բուրժուազիան, որը ինքը բուրժուազին Աստծուն չի հաւատում, բայց գտնում է, որ ժողովուրդի համար կրօնը անհրաժեշտ է, այդ բուրժուազիան մեղ մօտ սկի էլ նացիօնալիստական ըլլինելով, այնուամենայնիւ ժողովրդին, մասսաններին նացիօնալիզմի քարոզներն է տալիս։

Աթեիստ և հակազդայնական հայ բուրժուազիան ուժեղ կերպով սկսում է պատռաստել հայ բանւորութեանը և գիւղացիութեանը կրօնական և նացիօնալիստական դպացմունքները։ Որքան առաջ էր գնում սօցիալիստական շարժումը, այնքան աւելի և աւելի հայ բուրժուազիան սկսում է զբաղուել կրօնական և ազգային գործերով։

Ռուսական յեղափոխութիւնը եկաւ հասցնելու ջախչախիչ հարուածներ հայկական դեմօկրատական նացիօնալիզմին և կարճ ժամանակի ընթացքում անձանաշելի դարձնելու հայկական իրականութիւնը։ Հայկական դեմօկրատիան, որ մինչ այդ, չնորհիւ սահմանափակ տնտեսական յարաբերութիւնների, ապրում էր նեղ

կեանքով, այժմ քաղաքականապէս կապուեց ոռուսական դեմօկրատիայի հետ, որը իր անոելի ազատագրական շարժումով այլևս հերքում էր մետաֆիզիկ նացիօնալիստների այն կարծիքը, թէ ոռւս ժողովուրդը անընդունակ է առաջ գնալու։

Դերերը փոխում են։ Հայ դեմօկրատիան, որ մի քիչ առաջ՝ յանձին դեմօկրատական ինտելիգենցիայի, տարուած կատաղի նացիօնալիզմով դաւաճանութեան կնիքն էր դնում կօսմօպօլիտիզմով տարուած բուրժուազիայի ճակատին, այժմ ինքը նացիօնալիստական սրբապագանդայի է ենթարկւում այդ նոյն բուրժուազիայի կողմից։

Հայ բուրժուազիան, որ հայկական կոտորածներից և ազատ Հայաստանի վերաբերմամբ յոյսերի ի գերև ենելուց յետոյ միայն ծաղրում էր դեմօկրատական ինտելիգենցիայի ոգեսորութիւնը Տաճկահայաստանով, անուհետեւ արդէն ինքն էր պնդում, թէ «մեր փրկութիւնը Տաճկահայաստանումն է»։ Իհարկէ դա բուրժուազիայի կողմից նոյնալիսի մի խաբեբայութիւն է, ինչպէս և այն, թէ կրօնը և ազգայնութիւնը անհրաժեշտ են ժողովդի համար։ Այդ բոլոր միջոցներով բուրժուազիան մի նապատակի է միայն ձգտում—բթացնելու աշխատաւորութեան դասակարգային գիտակցութիւնը և հեռացնել աշխատաւոր մասսանների ուշադրութիւնը սօցիալիստական շարժումից։

Ռուսական յեղափոխութեան ազգեցութեան տակ հայկական դեմօկրատիայի հետ միասին ահազին յեղարշաման ենթարկուեց և նրա կուսակցութիւնը—Դաշնակցութիւնը։ Ռօմանտիկական նացիօնալիզմը խոշոր չափով ջախջախուեց, և դաշնակցական ինտելիգենցիան իլլիւզիաների աշխարհից ահազին քայլերով սկսեց իջնել դէպի իրական կեանքը։ Ռուսական յեղափոխութիւնը ծանօթացրեց նրան սօցիալական կեանքի օրէնքների հետ և, փոխել տալով նրա կարծիքը ոռւս ժողովրդի վերաբերմամբ, փոխեց նրա կարծիքը նաև տաճիկների վերաբերմամբ։ Նրանք, որոնք ըստ աւանդական մտածողութեան տաճիկ ժողո-

վուրդի մէջ տեսնում էին միայն մի անշարժ, առաջաղիմութեան անընդունակ մի ազգ, այժմ գալիս էին այն եղբակացութեան, որ այժմեան տաճիկը այլևս այն կիսավայրենին չէ, ինչ որ 600 տարի առաջ, և որ հայ ու տաճիկ ժողովուրդների սօցիալ-անտեսական պայմանները համարեա միանգամայն հաւասարուած են. Մնում է ու ընմաւել թուրքական նացիօնալիզմի դէմ և ազատազրական գաղափարները արծարծել թուրք մասսայի մէջ:

Այդպիսով զուտ ազգային ազատազրական շարժումը, որով երկար դարերի ընթացքում ոգևորուել էր ամբողջ հայ ժողովուրդը և որը այժմ այլևս չը համապատասխանելով ստեղծուած նորագոյն պայմաններին, ահազին չափով յետադիմական դոյն էր ստանում, — այդ աւանդական ազգայնականութիւնը կորցնում է իր գոյութեան իրաւունքը հայկական գեմօկրատիայի մէջ, ի մեծ ցաւ բոլոր այն յետադիմական տարրերի, որոնք սիրում են պղտոր ջրում ձուկ որսալ:

Եւ ահա մենք տեսնում ենք, որ մինչդեռ մի քանի տարի առաջ դաշնակցական գործիչները դաշն էին կապում քիւրդ ֆեօդալների հետ, գեմօկրատական կարգերի այդ կատաղի թշնամիների հետ, և առհասարակ տարւում էին ամեն տեսակ աւանտիւրիստական ձեռնարկներով՝ վեց վիլայէթների ինքնուրոյնութիւնը իրականացնելու համար, ընդհակառակն այժմ նրանք արդէն մտնում են թուրք և քիւրդ գիւղացիութեան մէջ և միանում նրանց հետ յանուն հողի և ազատութեան, յանուն առողջ գեմօկրատական սկզբունքների:

Այդ ուղղութիւնը մտաւ Տաճկաստան բացառապէս կովկասահայ գործիչների ջանքերով, որովհետեւ տաճկահայ գործիչները մինչև յուլիսի 11-ը թշնամարար էին տրամադրուած դէպի տաճիկները, որոնց յեղափոխական ընդունակութիւններին նրանք ոչ մի կերպ չէին կամենում հաւատալ:

Նոյն կովկասահայ գործիչների ջանքերով գումարուեց

և Տաճկաստանի ընդդիմադիր և յեղափոխական կուսակցութիւնների համագումարը Փարիզում, որը համապեսական մի յեղափոխութիւն առաջացնելու վճբոր կայացրեց: *)

Յուլիսի 11-ի յեղաշրջումից յետոյ Դաշնակցութիւնը համարեա միակ կուսակցութիւնն էր, որ փոքր ի շատ է լրջութեամբ մօտեցաւ սօցիալական հարցերին, որոնք կարծես գոյութիւն չունեն ոչ երիտասարդ թուրքերի, ոչ յայների և ոչ առհասարակ միւս ազգերի համար։ Տաճկական յեղափոխութիւնը առաջ եկաւ այդ երկրի իւրատեսակ բացառիկ քաղաքական պայմաններից և ոչ թէ դասակարգային շահերի ընդհարումից, և այդ է պատճառը, որ սօցիալական հարցին Տաճկաստանում գոյութիւն ունեցող կուսակցութիւնների ծրագրներում, բացի Դաշնակցութեան ծրագրից, այնքան չնչին, համարեա ոչ մի տեղ չէ տրուած: Եւ եթէ տաճկահայ գեմօկրատիայի կուսակցութիւնը — Դաշնակցութիւնը շատ բարձր է կանգնած տաճկական, յաւնական, բօլգարական և այլ կուսակցութիւններից, ապա դորանով նա պարտական է միայն և միայն ուստական մեծ յեղափոխութեան կրթիչ ազգեցութեանը: Այդ յեղափոխութիւնն էր, որ առաջ բերեց Դաշնակցութեան մէջ այսպէս կոչուած երիտասարդ դաշնակցականների հոսանքը, որը շարունակում է գոյութիւն ունենալ կուսակցութեան մէջ երիտասարդ դաշնակցականների մի մասի, այսպէս կոչուած անջատականների հեռանալուց յետոյ

*) Այն հանգամանքը, որ այդ կօնդրեսսին մասնակցեցին և երիտասարդ թուրքերը, այդ ծայրայեղ շովինիանները և աշխատաւորութեան թշնամինները, բոլորովին չի բացառում կօնդրեսսի յեղափոխական նշանակութիւնը: Երիտասարդ թուրքերը որոշ պատմական մօմենտում կատարում են յեղափոխական դեր, և որ չափով նրանք կողմնակից են յեղափոխութեան, այն չափով ամեն մի յեղափոխական կարող է նրանց հետ ժամանակաւորապէս դաշն կապել:

էլ, և որը այժմ ահազին զարկ է ստանում տաճկական յաղթական յեղափոխութիւնից: *)

Տաճկահայերը, որոնց միջոցով կովկասահայ նացիօնալիստական տարբեր կամենում էին իրազործել հայկական ինքնուրոյնութեան ծրագիրը, իրանց հերթին աշխատում էին վառ պահել կովկասահայերի մէջ ազգայնական կրակը՝ այդ վերջինների օգնութիւնը ապահոված լինելու համար: Այդ տեսակէտից տաճկահայերը կատարեցին չափանց մեծ բացասական դեր կովկասի վերաբերամբ: Յուլիսի 11-ի յեղացրջումը ոչ միայն ազատում է տաճկահայերին կովկասցինների օգնութեան կարիքը զգալուց, այլ և յեղացրջում է նրանց մտքերը այնպէս, ինչպէս ոռուսական յեղափոխութիւնը յեղացրջեց կովկասահայ դեմոկրատիայի մտքերը: Տաճկահայերը ոչ միայն դադարում են խոչնդուս հանդիսանալ կովկասեան առաջադիմական մտքի զարգացման, այլ և իրանք էլ սկսում են առաջադիմական գործօն հանդիսանալ:

Թիւրքիայի սահմանադրական կարգերի հաստատումով վերանում է ոչ միայն կովկասահայերի օգնութեան կարիքը, այլ և տեղական տարբեր սօցիալական խաւերի համերաշխ գործակցութեան կարիքը: Բոնապետութիւնը, որը անխափի չարիք էր բոլոր դասակարգերի համար, ստիպում էր այդ վերջիններին փոխազարձ դիջումների միջոցով իրար ձեռք մեկնել: Ընդհանուր թշնամու—բոնապետութեան վերացումով վերանում է և դասակարգային համերաշխութեան դրդիչ պատճառը և ստեղծում են պայմաններ դասակարգային պայքարի համար:

Դաշնակցութիւնը, որը Տաճկաստանում իր շուրջն է խմբել բոնապետութիւնից բոլոր դժո՞հ տարբերին, տարբեր հասարակական հոսանքների ընդհարման ասպարէզ պիտի դառնայ ճակատագրականօրէն, հէնց որ բոնապե-


տութեան վտանգը վերանայ և սահմանադրական կարգերը արմատներ ձգեն: Դասակարգային պայքարը աւելի և պիտի ուժեղանայ այն ժամանակ, երբ կապիտալիզմը մուտք գործելով թիւրքիա դասակարգային շերտաւորմանը մեծ զարկ կը տայ:

Այն հասարակական ալեկոծումը, այն կրիզիսը, որը ապրեց կովկասեան Դաշնակցութիւնը, կապրէ և տաճկահայ Դաշնակցութիւնը:

Դա իհարկէ կը լինի մի դժբաղութիւն բոլոր սահմատական հայերի և բոլոր յետադիմական տարբերի համար, բայց դա կը լինի առաջադիմական մի երեսյթ, նոյնքան անխուսափելի, որքան և ցանկալի արտադրող մասսաների համար:



*) Կաթողիկոսական ընտրութիւնների բօյկօսի յայտարարելը և այդ բօյկօսի իրազործումը կովկասում այդ հոսանքի վերջին ամենիուրուր յաղթանակներից մէկն է:



ՀՀ Ազգային գրադարան



NL0196222

